ԱՇՏԱՐԱԿԻ ԽՈՋԱՐԱՂԵՐԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Գ. Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Աշտարակի հնագիտական արշավախումբը ավտոճանապարհների շինարարության և վերանորոգման արտադրական միավորման հետ կնքված պայմանագրով 1988—89 թթ. պեղումներ է կատարել Երևան—Գյումրի ավտոմայրուղու Աշտարակը շրջանցող հատվածում, «Խոջաբաղեր» կոչվող տարածքում, ի թիվս այլ հնագիտական հուշարձանների, պեղվել են վեց ուշ բրոնզեդարյան դամբարաններ, որոնցից առաջինը[1] գտնվում էր կառուցվող ճանապարհի մերձակայքում և ենթակա էր ավերման, իսկ մյուս հինգ դամբարանները (№ 2—6) գտնվում էին ավտոմայրուղու կառուցվող հատվածից 50—100 մ դեպի հյուսիս, ժայռոտ հրվանդանի վրա։

Դամբարանախմբի շրջակայքը հարուստ է տարբեր դարաշրջանների հնագիտական հուշարձաններով։ Նրա անմիջական հարևանությամբ գտնվում են ուշ հելլենիստական և միջնադարյան հնձաններ, որոնցից հինգը պեղվել են[2]։ Տեղանքի «Խոջաբաղեր» անվանումը արձագանքն է նախկինում այդտեղ փռված խաղողի այգիների[3]։ Պեղված դամբարաններից մոտավորապես 2 կմ դեպի արևելք, Քասախի ձորագլխին տեղադրված է վաղ և միջին բրոնզեդարյան բնակատեղին՝ Աշտարակի բերդ-շենը[4], իսկ մոտավորապես 1,5 կմ դեպի հարավ-արևմուտք գտնվում են հնձաններ և մի քանի դամբանաթմբեր, որոնցից մեկը, որ պատկանում էր միջին բրոնզի դարաշրջանին, պեղվել է։ Վերջինիս հարևանությամբ է գտնվում Վերին Նավեր դամբարանադաշտը։

№ 1 դամբարանի վերգետնյա մասն ավերվել էր շինարարության ընթացքում, մյուս դամբարաններն ունեին արտաքուստ երևացող նշաններ. դրանք քարե լիցքով, 0,70—1,50 մ բարձրությամբ դամբանաթմբեր էին, շրջափակված 6—7 մ տրամագծով, շրջանագծով շարված որձաքարե կրոմլեխներով[5]։ Դամբարանների կրոմլեխները մասամբ ավերվել էին ժամանակի ընթացքում, սակայն առկա հատվածները հնարավորություն էին տալիս մտովի վերականգնել իրական պատկերը։ Լավ էր պահպանված հատկապես № 2 դամբարանի կրոմլեխը։ Դամբանաթմբերի լիցքը թաղման խցերի ծածկասալերը չէր ծածկում։

Դամբանախցերը տեղադրված էին դամբանաթմբերի կենտրոնական հատվածներում։ Դրանք վերգետնյա քարարկղեր էին, տափակ դրված ժայռաբեկորներով կամ սալաքարերով կառուցված։ Դամբանախցերի պատերը միաշարք էին (№ 2, 4) կամ երկշար (№ 1, 3, 6), նրանց հատակը բնական ժայռն էր։ Կառուցվածքի տեսակետից բացառություն էր կազմում № 5 դամբարանը, որի առանձնահատկությունների մասին կխոսվի քիչ ավելի ուշ։

---

1 Խոջաբաղերի № 1 դամբարանը հայտնաբերել է հնագետ Հ. Ե. Սիմոնյանը շրջանցիկ ճանապարհի տարածքի հնագիտական տեղազննության ընթացքում։

2 Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Աշտարակի հնձանների համալիրի 1987 թ. պեղումները. Հայաստանի Հանրապետությունում 1987—88 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ). Երևան, 1989, էջ 89—90։ Հ. Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ս. Գ. Հ ո ր ո ս յ ա ն, Հ. Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Աշտարակի միջնադարյան հնձանները (1988 թ.).—ԴՀԱԱ, Երևան, 1989, էջ 90—92։

3 Ե ր. Շ ա հ ա գ ի զ. Աշտարակի պատմությունը. Երևան, 1987, էջ 129, 168։

4 Հ. Ե. Ս ի մ ո ն յ ա ն. Աշտարակի բերդ-շենը.—ԴՀԱԱ. Երևան, 1991, էջ 19—20։

5 Չափագրությունները կատարել է ճարտարապետ Լ. Վ. Կիրակոսյանը։

Դամբանախցերը վերևից ծածկված են եղել երկու-երեք սալերով, որոնցից անշարժ պահպանված էին մեկ-երկուսը։ № 3 դամբարանի ծածկասալերը բացակայում էին։

№ 1 դամբանախուցը և նրա նախամուտքը հատակագծում ուղղանկյուն էին, ուղղված արևելքից-արևմուտք, դեպի հարավ 22° շեղումով։ Թաղման մյուս խցերը հատակագծում երկրաչափական սեղանի ձև ունեին, բոլորը հյուսիսային կողմում ավելի նեղ էին հարավայինից։ Նրանց չափերը տատանվում էին 2,38—1,80×1,25—1,00×1,00×0,60 մ սահմաններում, յուրաքանչյուրի երկարությունը մոտավորապես կրկնակի մեծ էր լայնությունից։ № 6 դամբանաթմբի թաղման խուցը հյուսիս-հարավ առանցքով, մյուս դամբանախցերը ձգվում էին հյուսիս-հարավ ուղղությամբ, դեպի արևմուտք 15° և 25° (№ 2, 3 դամբ.) և դեպի արևելք 25° (№ 4 դամբ.) շեղումներով։ Դամբարաններն ունեին նախամուտքեր, որոնք գտնվում էին թաղման խցերի հյուսիսային կողմում, սկսվում էին կրոմլեխի քարերից և անկանոն ձևով թեքությամբ իջնում (№ 4 դամբարանի նախամուտքը ներքևից վերև էր բարձրանում) մինչև դամբանախցերի հյուսիսային պատերը՝ մուտքերը։ Մուտքերը շարված էին նեղ ու երկար որձաքարերով, հավանաբար թաղման արարողության ավարտից հետո։

Դամբանախցերի ուղղությունն, անշուշտ, կապված է աշխարհայացքային պատկերացումների հետ։ Խոշաբաղերի դամբարանները կառուցողները հավանաբար ենթադրել են, որ ստորգետնյա աշխարհ հնարավոր է իջնել հյուսիսից, որտեղ և, հավանական է, գտնվում էր այնկողմնային աշխարհի մուտքը[6]։ Նման պատկերացում ունեին նաև հին եգիպտացիները և հռոմերոսյան դարաշրջանի հույները։

Ինչ վերաբերում է դամբանախցերի և նրանց նախամուտքերի հյուսիս-հարավ առանցքից որոշ շեղումներին, ապա դրանք պարտադիր կերպով առաջանալու էին, որպես հետևանք հորիզոնում արևի դիրքի փոփոխության։ Ենթադրվում է, որ մեր նախնիները, Սթոունհենջի շինարարների նման, ուղղությունները հաշվարկել են այն կետից, որտեղ արևի սկավառակը ստորին կետով հպվել է հորիզոնին[7]։

Այժմ № 5 դամբարանի կառուցվածքի մասին։ Այն ակնհայտորեն տարբերվում էր մյուս դամբարաններից։ Նրա արևելյան և հյուսիսային պատերին փոխարինում էր ժայռը, արևմտյան պատը կազմում էին երկու օրթոստատ սալաքարերը, որոնցից մեկը դրված էր մայր հողի վրա, մյուսը՝ երկշար որձաքարե հիմքի վրա, հարավից մուտքը փակում էր թեքությամբ դրված մեկ այլ սալաքար։ Դամբանախցի հատակը մայր հողն էր, ծածկասալերը երկուսն էին։ Թաղման խուցը հատակագծում նավակաձև էր, 2,10×1,17×1,15 չափերով։ Նախամուտքը, սկսվելով քարե շրջանից, թեք հարթությամբ բարձրանում էր դեպի դամբանախուցը։ Կրոմլեխի արևմտյան հատվածի պահպանված քարերը նույնպես ուղղաձիգ էին կանգնեցված։ Թվում է, որ № 5 դամբանաթմբի թաղման խուցն իրենից բաղադրյալ դոլմեն էր ներկայացնում[8]։

Հայաստանում դոլմենների առկայությանն անդրադարձել են Թ. Թորամանյանը, Ա. Քալանթարը, Եր. Լալայանը, Ս. Բաբխուդարյանը, Հ. Մարտիրոսյանը և այլք։ Թ. Թորամանյանն, օրինակ, նշում է, որ Հայաստանի դոլմենները բավականին տարբերվում են այլ երկրներում գտնված նույնանուն կառույցներից[9]։ Կարծիք է հայտնված, որ «դոլմենային թաղումները Հա-

---

6 Վերին Նավեր և Շամիրամի դամբարանադաշտերում դամբանախցերի կողմնորոշվածությունից ելնելով Հ. Ե. Սիմոնյանը ենթադրում է, որ հյուսիսային կողմը սրբազան է համարվել։ Տե՛ս. Հ. Ե. Սիմոնյան. Նոր դիտողություններ բրոնզի և վաղ երկաթի դարի դամբարանների կողմնորոշման վերաբերյալ.—Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր. Երիտասարդ գիտնականների 7-րդ կոնֆերանս. Զեկուցումների թեզիսներ. Երևան, 1986, էջ 7—9։

7 Дж. Хокинс, Дж. Уайт. Разгадка тайны Стоунхенджа. М., 1973, с. 151.

8 «Բաղադրյալ դոլմեն» հասկացության մասին տե՛ս Е. Д. Фелицын. Западно-кавказские дольмены.—Материалы по археологии Кавказа (далее—МАК). Вып. IX, М., 1904, с. 21; Л. И. Лавров. Дольмены северо-западного Кавказа.—Труды Абхазского института языка, литературы и истории (далее—Труды АБИЯЛИ). Вып. XXXI. Сухуми, 1960, с. 102; В. И. Марковин. Дольмены Западного Кавказа. М., 1978, с. 58—59.

9 Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. Երևան, 1942, էջ 3։

յաստանի համար այնքան էլ բնորոշ չենք»[10]։ Հետազոտողները գտնում են, որ գոլմենները թաղման վերգետնյա շինություններ են, որոնք կառուցված են ուղղաձիգ կանգնեցված մեծ սալաքարերով, ունեն մուտք և տանիք[11]։

Որքան մեզ հայտնի է, Հայկական լեռնաշխարհին ամենամոտ տարածքաշրջանը, որտեղ գոլմենային մշակույթն առավել լավ է ուսումնասիրված՝ հյուսիսարևմտյան Կովկասն է։ Ցնայած Թ. Թորամանյանը տարբերություն էր տեսնում հյուսիսային Կովկասի և Հայաստանի գոլմենների շինարարական արհեստի մեջ[12], այնուամենայնիվ, մեր կարծիքով, № 5 դամբանաթմբի թաղման խցի անվանումը (ուստի և տիպը) ճշգրտելու համար արժե համառոտ անդրադառնալ վերոհիշյալ տարածքաշրջանի գոլմեններին։

Հյուսիսարևմտյան Կովկասի դասական գոլմենները, որոնց ուսումնասիրողներն անվանում են «լրիվ» («ամբողջական»)[13], «սովորական»[14] կամ «սալաքարային»[15], շինարարական արհեստի տեսանկյունից ունեն մանրակրկիտ մշակված ձևեր և հնարքներ, սակայն, այնուամենայնիվ, համեմատության եզրեր ունեն № 5 դամբանախցի հետ՝ կառուցվածքային առումով (բաղադրյալ գոլմեններն, ինչ խոսք, առավել ևս համեմատելի են քննարկվող դամբանախցի հետ)։ Այսպես, օրինակ, հիշենք, որ գոլմենները սովորաբար կառուցվում էին լեռնալանջերին[16], այնպես, որ ետին պատը կազմող սալաքարը կպած էր լինում լանջին, իսկ մուտքը կառուցվում էր արևահայաց (մեծամասամբ՝ հարավային) ուղղությամբ[17]։ № 5 դամբանաթմբի թաղման խուցը կառուցողները համանման ձևով են մոտեցել խնդրի լուծմանը. նրանք արևմուտքից կառույցն այնպես են կցել-հարմարեցրել ժայռոտ հրվանդանին, որ բնական ժայռի ելուստը դամբանախցի համար հյուսիսային (ինչպես նաև արևելյան) պատ է ծառայում, իսկ սալաքարով փակված մուտքը (մուտքը փակող սալաքարը, հավանաբար, սկզբնապես ուղղաձիգ է դրված եղել և ոչ այդքան թեք) ուղղված է դեպի հարավ, այն դեպքում, երբ նույն դամբարանախմբի մյուս բոլոր դամբարանների մուտքերը հյուսիսային կողմից են կառուցված (բացառությամբ № 1 դամբարանի, որի մուտքը արևելքից է, հանգամանք, որը, թերևս, կարող է բացատրվել մյուսների հետ ժամանակագրական տարբերությամբ) և փակված են նեղ ու երկար քարերով։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե գոլմենի կառուցվածքում սողանցքի առկայությունը պարտադիր է, քանի որ արևմտյան Կովկասի գոլմենների ճնշող մեծամասնությունն օժտված է սողանցքով։ Սակայն մեր հաշվարկները ցույց տվեցին, որ մինչ այժմ վերոհիշյալ տարածքաշրջանից հայտնի (հրապարակված) 2308 գոլմեններից առնվազն 15-ը սողանցք չունեն։ Սողանցք չունեն նաև Մերձկարպատյան (Վոլինյան բարձրավանդակ) և Միջերկրայքի (Պիրենյան թերակղզի, Ալժիր) գոլմենները[18]։ Բավականին շատ են նաև արևմտյան Կովկասի այն գոլմենները, որոնք կողային սալաքարերին չունեն կրնկաքարեր և ակոսներ։ Ասենք նաև, որ կան գոլմեններ, որոնք վերևից փակված են մեկից ավելի ծածկա-

---

10 Հ. Ա. Մարտիրոսյան. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր. Երևան, 1969, էջ 23։

11 Նույն տեղում։ Թ. Թորամանյան. նշվ. աշխ., էջ 3։ Ս. Բարխուդարյան. Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները. Երևան, 1935, էջ 32։ Л. Н. Соловьев. Погрсбення дольменпой культуры в Абхазии и прилегающей части Адлерского района.—Труды АБИЯЛИ. Вып. XXXI, с. 73, В. И. Марковин. Указ. соч., с. 283—284.

12 Թ. Թորամանյան. նշվ. աշխ., էջ 5։

13 Е. Д. Фелицын. Указ. соч., с. 14, 18.

14 Л. И. Лавров. Указ.соч.. с. 102—103.

15 В. И. Марковин. Указ. соч., с. 60.

16 Ս. Բարխուդարյան. նշվ. աշխ., նույն տեղում։ В. И. Марковин. Указ. соч., с. 133; Ю. Н. Воронов. Археологическая карта Абхазии. Сухуми, 1969, с. 24.

17 Ю. Н. Воронов. Указ. соч., с. 24, 33; В. И. Марковин. Указ. соч., с. 204, 208.

18 В. И. Марковин. Указ. соч., с. 04, 311.

սալերով[19]։ Ավելացնենք, որ դոլմենային կառույցների համադրությունը դամբանաթմբերի կամ կրոմլեխների հետ եղակի երևույթ չէ[20]։

Այսպիսով, № 5 դամբանաթմբի թաղման խուցն իր կառուցվածքային առանձնահատկություններով չի հակասում «դոլմեն» հասկացությանը։ Այն կարելի է բաղադրյալ դոլմեն համարել։

Ե՛վ № 5 դամբանաթմբի թաղման խուցը, և՛ մյուս դամբանախցերը լրիվ կամ մասամբ, իսկ նրանց նախամուտքերն՝ ամբողջությամբ լցված էին քարի և հողի փոքրով։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր դամբանախցերն ունեին մուտքեր, որոնք իրենց կառուցվածքով տարբերվում էին մնացած երեք պատերից և շարվել էին ծածկասալերը տեղադրելուց և թաղումը կատարելուց հետո, ապա կարելի է պնդել, որ հողն ու քարերը դամբանախցերն են լցվել ոչ թե թաղման արարողությունը կատարողների կողմից, այլ՝ հետագայում։ Հայաստանում նման քարարկղների գոյությունը, որոնք սկզբնապես լցված չեն եղել հողով, նորություն չէ[21]։

№ 2 և № 6 դամբարանների թաղման խցերի հյուսիսային կողմում, խցերի լայնքով մեկ տեղադրված էին բազալտե որձաքարեր։ Նկատի ունենալով այն իրողությունը, որ № 2 դամբանախցի նշված քարի վրայից, ինչպես և նրան կից գտնվել են մարդու ատամներ, իսկ № 6 դամբանախցի նշված քարին կից՝ մարդու գանգոտկրի մի հատված, կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ քարերը կարող էին զլխատակի քարեր լինել։ Ննջեցյալի գլուխը քարին դնելու սովորությունը Հայկական լեռնաշխարհում հայտնի է դեռևս պղնձեքարի դարաշրջանում (Նախիջևանի Մոխրաբլուր)[22]։ Այն շարունակում է գոյատևել վաղ բրոնզի դարաշրջանում (Ջրվեժ, Քեթի[23], Ստեփանակերտ[24])։ Նման երկու փաստ է առկա Քաղուի գյուղի ուշ բրոնզեդարյան դամբարաններից մեկում[25], ինչպես նաև Վանտձորի «Դիմաց» թաղի դամբարանախմբի № 1 և № 4 դամբարաններում[26], իսկ Կամո քաղաքից ոչ հեռու «Ավղնոց» կոչվող վայրում գտնվող դամբարանները[27], ինչպես նաև Արթիկի կատակոմբները, որոնց մեջ համանման դեպքեր կան, թվագրվում են վաղ երկաթի դարաշրջանով։

Պեղումներով հայտնաբերված մարդաբանական նյութը որոշ եզրահանգումների հնարավորություն է տալիս[28]։ Դամբարաններից և ոչ մեկում մարդու ամբողջական կմախք չի գտնվել։

---

[19] В. И. Марковин. Указ. соч., с. 297; Е. Д. Фелицын. Указ. соч., с., 9, 14, 18.

[20] Е. Д. Фелицын. Указ. соч., с. 15, 17; Ю. Н. Воронов. Указ. соч., с. 19; В. И. Марковин. Указ. соч., с. 133, 222, 284.

[21] А. О. Мнацаканян. О раскопках могильников у села Головино (Армения). — Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры АН СССР (далее—КСИИМК). Вып. XLVI М., 1952, с. 65; Он же: Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. (Предварительное сообщение).—СА, 1957, № 2, 146—153; Կ. Ղաֆադարյան. Դամբարանների պեղումներ Կիրովականում.—ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, № 3—4, էջ 57—61։ Լ. Ա. Պետրոսյան. Պեղումներ Քուչակում.—ԴՀԱԱ. Երևան, 1985, էջ 21 և այլն։ Հողով լցված չէ նաև Արթիկի դամբարանների մի զգալի մասը, սակայն, կառուցվածքային առանձնահատկություններից ելնելով, այստեղ դրանք չենք նշում։

[22] О. А. Абибуллаев. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 39. 51.

[23] Л. А. Петросян. Раскопки памятников Кети и Воскеаска (III—I тыс. до н. э.). Ереван, 1989, с. 40.

[24] Я. И. Гуммель. Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана. — КСИИМК. Вып. XX. Л,, 1948, с. 20.

[25] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. III—I тыс. до н. э. Ереван, 1975, с. 149.

[26] Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 57, 60։

[27] Ե. Լալայան. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում. Երևան, 1931, էջ 95.

[28] Մարդաբանական նյութի ուսումնասիրությունը կատարել է մարդաբան Ա. Կ. Փալիկյանը, ում և շնորհակալություն եմ հայտնում։

հայտնաբերվել են մարդկանց ատամներ, կմախքի մասեր։ Երկու դեպքում մարդու ատամներ և կմախքի որոշ մասեր են գտնվել թաղման խցերից դուրս, բուն դամբանաթմբերից։ Մարդաբանական հետազոտությունները վկայում են, որ նշված դեպքերում դամբանաթմբերից գտնված կմախքի մասերը կարող էին պատկանել դամբանախցերում ամփոփված ննջեցյալներին։ Կմախքների ոսկորները տեղադրված էին դամբանախցերի երկայնքով, ատամները և գանգոսկրի մասերը՝ դամբանախցերի հյուսիսային կողմերում։ № 2 դամբանախցում, հավանաբար, գտնվում էին տղամարդու և կնոջ կմախքների մնացորդներ, № 4-ում՝ տղամարդու, № 5-ում՝ երեխայի և կնոջ, № 6-ում՝ մեկ մարդու գանգոսկրի մասեր և ատամներ։ Հնարավոր է եզրակացնել, որ ուսումնասիրվող դամբարանախմբում, հավանաբար, հանգուցյալներն ամփոփվել են երկրորդվող դիաթաղման (վերհուղարկավորման) եղանակով։ Թաղման այս եղանակը ևս, ամրողջական դիաթաղման, դիակիզման, դիամասնատման եղանակների հետ միաժամանակ կիրառվում էր հնթանոսական Հայաստանում։ Ուշ բրոնզի գարաշրջանում պատմական Արագածոտնում հայտնի են երկրորդվող դիաթաղման եղանակով հուղարկավորումներ[29]։

Խոշաքաղերի դամբարանախմբում թաղումներն ուղեկցվել են կենդանիների զոհաբերությամբ և հոգեհացի արարողություններով։ Պեղումներով տարբեր կենդանիների ոսկորներ են հայտնաբերվել ինչպես դամբանախցերում, այնպես էլ խցերից դուրս՝ բուն դամբանաթմբերում[30]։ Գտնված ոսկրաբանական նյութը ոչ միայն պատկերացում է տալիս տարածքաշրջանի կենդանական աշխարհի մասին, այլև որոշ չափով լրացնում կամ հաստատում է արդեն հայտնի ծիսական զոհաբերությունների ցանկը։ Դամբարաններում հայտնաբերված ոսկորների քանակը 1-ից մինչև 41 անատոմիական միավոր է։ Գտնվել են մանր եղջերավոր կենդանիների, խոզի, աղվեսի և կովկասյան աղվացեղ եղջերուի կմախքների մնացորդներ։

Դամբանաթմբերում (ներառյալ դամբանախցերը և նրանց նախամուտքերը) սփռված էին քիչ թվով վանակատի ցլեպներ և բեկորներ։ Ինչպես հայտնի է, դրանց թիվը վաղ և միջին բրոնզեդարյան դամբանաբլուրներում երբեմն հարյուրների է հասնում։ Դամբանաթմբով մեկ վանակատի և կայծքարի բեկորներ սփռելը, նրանցից պատրաստված գործիքներ ու զենքեր տեղադրելը, որպես ծիսակարգի բաղկացուցիչ մաս՝ ծիսակատարություն, արձանագրված և լուսաբանված է հետազոտողների կողմից[31]։ Կարելի է եզրակացնել, որ վանակատի և կայծքարի բեկորներ ցրելու ծիսակատարությունը մտնում էր ննջեցյալի աճյունի կամ դիակի պահպանության ծիսական համակարգի մեջ, քանի որ այդ բեկորներին, ակներևաբար, վերագրվում էր փորձանքը խափանելու, վնասաբեր ազդեցությունները և չար ոգիները վանելու հատկություն։ Նույն նպատակին էր ծառայում սրբազան շրջանի (հողե, քարե, փորված) կառուցումը և նրա ներսը կրակով մաքրագործելը[32]։ № 1 դամբարանի նախամուտքի պատի «գաղտնարանում», ճղմված լայնաբերան սափորի միջից, ի հայտ եկավ կանաչ գույնի բռնցքաչափ մի գլաքար, որի առկայությունը, հավանաբար, կապված է ջրի և մաքրագործման գաղափարի հետ[33] (դամբարանախմբի տարածքում նման քարեր չկան)։ Քարեղանի մեջ դրված կոպիճ է

---

29 Г. Е. Арешян. Раскопки Больших шамирамских курганов. — В кн.: Археологические открытия 1981 года. М., 1983, с. 425—426. Վ. Է. Հովհաննիսյան. 1987 թ. պեղումները Քարաշամրի դամբարանադաշտում.— ԴՀԱԱ. Երևան, 1989, էջ 16։

30 Կենդանաբանական նյութի հետազոտությունը կատարել է արժանահիշատակ Ս. Կ. Մեժլումյանը։

31 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, I. (Опыт периодизации памятников). Тбилиси, 1941, с. 121; А. Е. Симонян. Обсидиан и кремень как атрибуты погребального обряда. — В кн.: Вопросы изучения армянской народной культуры (Культура и язык). VIII Конференция молодых ученых. Тезисы докладов. Ереван, 1988, с. 79—81.

32 Т. С. Хачатрян. Указ. соч., с. 149; Он же. Артикский некрополь. Каталог. Ереван, 1979, с. 8—9; Ս. Եսայան, Ա. Կանեցյան. Օշականի անտիկ դամբարանների ձևերն ու կառուցվածքը.—«Երբեր հասարակական գիտություններից», 1986, № 1, էջ 70։

33 Ս. Եսայան, Ա. Կանեցյան. նշվ. աշխ., էջ 70։ Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, с. 148—149.

հայտնաբերվել Արթիկի № 417 դամբարանում[34], որը թվագրվում է վաղ երկաթի դարաշրջանով։ Արվում էր ամեն ինչ, որպեսզի հանգուցյալները զերծ մնային արտաքին անմաքուր ազդեցություններից։

Քարե միակ աշխատանքային գործիքը, որ գտնվել է խոշարաղերի դամբարանախմբի պեղումներով, № 2 դամբանախցից հայտնաբերված դարչնագույն վանակտի հարդարված ցլեպն է կամ ցլեպի հիման վրա պատրաստված գործիքը (աղ. II, 3)։ Նրա հետ միասին գտնվել է վանակատի առանց հարդարման ևս մեկ ցլեպ։ Պատահական չէ, որ հարդարված ցլեպը գտնվել է մի դամբարանում, որտեղից ի հայտ են եկել կենդանիների առավելագույն թվով ոսկորներ։ Վանակատի և կայծքարի ցլեպները (հաճախ առանց հարդարման) դրվում էին զոհաբերված կենդանիների կմախքների (կամ նրանց որևէ մասի) մոտ, իսկ երբեմն՝ հենց կմախքի վրա, ընդգծելով տժյալ իրի կապը զոհաբերված կենդանու հետ։ Արագածոտնում նման դեպքեր փաստագրված են Վերին Նավերում[35], Արուճի դամբարանադաշտում[36], Շամիրամի մեծ դամբանաբլուրներում[37] և այլուր։ Այս ծիսակատարությունը կիրառվում էր հյուսիսարևելյան Հայաստանի տարածքում դեռևս միջին բրոնզի դարաշրջանում[38] և տարածում ուներ արևելյան Վրաստանի միջին և ուշ բրոնզեդարյան դամբարաններում[39]։ Զ. Գ. Շատբերաշվիլին բերում է վանակատե «դանակի» օգնությամբ ոչխարը ծիսականորեն մորթելու ազգագրական օրինակներ[40], իսկ Լ. Ա. Պետրոսյանը այդ իրերի ծիսական իմաստը համարում է «մսի օգտագործումը հանդերձյալ աշխարհում»[41]։

Փոքր խումբ են կազմում զարդարանքի առարկաները։ Մետաղյա իրերը ներկայացված են չմիացող ծայրերով երկու փոքրիկ օղերով, որոնցից մեկը թերի է։ Դրանք գտնվել են № 1 (աղ. 1, 6) և № 5 (աղ. II, 5) դամբարաններից և, պատրաստված լինելով բրոնզե բարակ լարից, բավականաչափ քայքայված են։ Այդ օղերը, որպես կանոն, դուգակցվում են ուլունքների որոշակի տեսակների (մածուկից պատրաստված սեղմված գնդաձև, սպիտակ դույնի համեմատաբար մեծ ուլունքներ, տափօղակաձև փոքր ուլունքներ և այլն), ինչպես նաև օձագլար միջնալարով կախիկների հետ։

Մեկ այլ խումբ են կազմում ուլունքները, որոնք գտնվել են № 1,5 և 6 դամբանախցերից, ըստ որում վերջին երկուսից՝ մեկական։ № 1 դամբարանի թաղման խցից գտնվել են ընդամենը 7 ուլունքներ (աղ. I, 7), որոնցից երեքը պատրաստված են բաց և մուգ կարմիր գույնի սարդիոնից, երկուսը՝ ապակու մածուկից (կաթնագույն և բաց կանաչ), մեկը՝ մանուշակագույն ապակուց, մեկը՝ բաց կանաչ գույնի հախճապակուց (նկարում՝ ձախից աջ)։ Սարդիոնե ուլունքներն արտաքուստ անփույթ են մշակված, անցքերն արված են խողովակաձև գործիքով, միակողմանի շաղափման միջոցով։ Նրանք լայն տարածում են ունեցել հատկապես ուշ բրոնզի—զարգացած երկաթի դարաշրջաններում[42]։

Ապակե մանուշակագույն ուլունքը գնդաձև է, արծաթափայլ մակերևույթով։ Հայտնի է, որ ապակե ուլունքները պատրաստվել և գործածվել են Հայաստանում ոչ ուշ, քան մ.թ.ա.

---

34 Т. С. Хачатрян. Указ. соч., с. 150.

35 Հ. Ե. Սիմոնյան. Պեղումներ Վերին Նավերում.—ԴՀԱԱ., 1989, էջ 12։

36 Գ. Ե. Արեշյան, Գ. Ս. Ռումանյան. Արուճի դամբանատեղի № 5 դամբարանը.—ԴՀԱԱ, 1991, էջ 25։

37 Г. Е. Арешян. Указ. соч.

38 Э. В. Ханзадян. Лчашенский курган № 6. — КСИА., Вып. 91. М., 1962, с. 66, 67, рис. 23.

39 К. Н. Пицхелаури. Восточная Грузия в конце бронзового века. — Труды Кахетской археологической экспедиции. Вып. III. Тбилиси, 1979, с. 29—30.

40 Նույն տեղում։

41 Լ. Պետրոսյան. Հետախուզական պեղումներ Քեթիում (1970 թ.).—«Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 4, էջ 216։

42 Г. Г. Леммлейн. Опыт классификации форм каменных бус. — КСИИМК. Вып. XXXII. М.—Л., 1950, с. 165.

II հազարամյակի կեսերից[43]։ Մեր օրինակն ունի իր զուգահեռները (Լճաշեն, Արթիկ, Վերին Նավեր, Մեծամոր[44])։



Աղյուսակ I

Հախճապակյա բաց կանաչ գույնի ուլունքն արտաքինից քայքայված է, այն ծակոտկեն, մի կողմից սեղմված գնդաձև մակերևույթ ունի։ Շամիրամի մեծ դամբանաբլուրներում հախ-

---

43 Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան. Հին Հայաստանի ապակին (I—IV դդ.). Երևան, 1969, էջ 8։

44 Փ. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան (այսուհետև՝ Է. Վ. Խանզադյան և այլք). Մեծամոր. Երևան, 1973, էջ 173, 178։

ճապակյա ուլունքները հանդիպում են ապակե ուլունքների համակցությամբ, Արթիկի դամբարաններում զուգակցվում են տափօղակաձև ուլունքների հետ։

Ապակու մածուկից պատրաստված սեղմված գնդաձև և տափօղակաձև մանր ուլունքները հնագիտական համալիրներում հաճախ միասին են ի հայտ գալիս։ Արթիկի ուշ բրոնզեդարյան դամբարաններում դրանք հաճախ զուգակցվում են։ Հիշյալ առաջին տեսակի ուլունքները երբեմն ներկայացված են մի քանի օրինակներով, երկրորդ տիպի ուլունքները հանդիպում են շարաններով։ Մածուկե տորաձև կարմրադարչնագույն ուլունքը (աղ. II, 6) միակն է № 5 դամբարանում և, ընդհանրապես, ողջ դամբարանախմբում։ Նման օրինակները հանդիպում են մյուս երկու տեսակների՝ սեղմված գնդաձև և տափօղակաձև ուլունքների հետ մեկտեղ, իսկ երբեմն՝ ապակե և հախճապակե ուլունքների հետ միասին։ № 6 դամբարանից գտնված մածուկե բաց կանաչ գույնի, գնդաձև ուլունքին (աղ. III, 2) ուղղահայաց 4 ակոսների միջոցով քառանիստ տեսք է տրված, իսկ ուղղահայաց ակոսների միջև արված են հորիզոնական ակոսներ։ «Մատանեքաղոր» ուլունքներն ի հայտ են գալիս Հայաստանի հնագիտական հուշարձաններում դեռևս միջին բրոնզե դարաշրջանում (Մայիսյան, Լոռի բերդ)։ Դրանք պատրաստված են տարբեր նյութերից (մետաղներ, քարեր, մածուկ, հախճապակի, ապակի) և հանդիպում են վերոհիշյալ մյուս տեսակների համակցությամբ։

Այսպիսով, չնայած ժամանակագրական որոշ տարբերություններին (ինչպես կտեսնենք հետագայում), խոշաբաղերի տարբեր դամբարաններից ի հայտ եկած ուլունքների զուգահեռներն այլ հնագիտական համալիրներում հանդես են գալիս միասին։ Այն տպավորությունն է ստացվում, որ հիշյալ դամբարանախմբի ուլունքների փոքր հավաքածուն, ամբողջության մեջ, ավելի դյուրին է կապվում Արթիկի նման համախմբերին, քան Լճաշենի հավաքածուներին։

Թաղումներն ուղեկցող հնագիտական նյութը պեղված դամբարաններում հիմնականում ներկայացված է խեցեղենով[45]։ № 3 և № 6 դամբարաններում խեցանոթների բեկորները սփռված էին թաղման խցերի ողջ տարածքով, ըստ որում № 3 դամբանախցում առկա բեկորներից մի քանիսը դիտավորյալ մանրացված-փշրված էին։ Կրոմլեխի հարավային եզրագծին կից ժայռոտ տեղանքը հավանաբար օգտագործվել էր որպես զոհասեղան, քանի որ հենց այդ հատվածում էին դիտավորյալ փշրվել որոշ խեցանոթներ, որոնց մնացորդներն այնուհետև տեղադրվել էին դամբանախցում, իսկ շատ մանր կտորները թողնվել էին տեղում, որոնք և, հայտնաբերվելով պեղումների ընթացքում, նշված եզրակացության պատճառ հանդիսացան։ № 2 դամբանախցում տեղադրված սափորը նույնպես շարդված էր։ Նրա կտորները գտնվում էին հատակի վրա, իրարից զգալիորեն հեռու։ Հիշյալ փաստը խոսում է այն մասին, որ անոթը շարդվել է մինչև այն պահը, երբ թաղման խուցն սկսել է լցվել հողով և քարով։ Իսկ կճուճներից մեկի մի քանի բեկորները դամբանախցում էին, մյուսները՝ դամբանաթմբում, թաղման խցից դուրս։ Նույն իրողությունն առկա էր նաև № 6 դամբարանում։

Հիշյալ երևույթն անդրադարձն է մի ծիսակատարության, որի մասին ժամանակին խոսել է Բ. Ա. Կուֆտինը։ Թռեղքի դամբարաններում նա ոչ միայն դիտավորյալ փշրված անոթներ է հայտնաբերել, այլև դիտավորյալ շարդված զենքեր (Բեշտաշեն, դ. № 11 և 13)[46]։ Խեցանոթների զոհաբերությունն աղերսվում է հարություն առնելու հավատալիքներին[47]։ Կարծիք է հայտնված, որ երկրորդված թաղման (վերահուղարկավորման) ծիսակարգը, հավանաբար, առաջացել է համաձայն այն պատկերացումների, որ հոգին և մարմինը գտնվում են անխզելի կապի մեջ և հոգին կարող է անջատվել մարմնից միայն մարմնի քայքայումից (անհայտացումից) հետո[48]։ Կարելի է ենթադրել, որ խեցանոթները և, ընդհանրապես, գույքը շարդելու արարողությունն աղերսվում է միևնույն պատկերացման հետ[49]։ Այս աշխարհում իրենց «մար-

---

[45] № 1 և № 5 դամբարանների ամենավերին շերտում գտնվել են նաև զարգացած միջնադարյան շնարակած և անշնարակ խեցանոթների բեկորներ, որոնք, անկասկած, ուշ ժամանակաշրջանի հավելումներ են և այդ տարածքում են հայտնվել երկուս ու կես հազարամյակ հետո։

[46] Б. А. Куфтин. Указ. соч., с. 66, 315, табл. XL; с. 317, табл. XLI.

[47] Э. Церен. Библейские холмы. М., 1966, с. 364, 385.

[48] В. И. Марковин. Указ. соч., с. 228.

[49] Աշտարակի գերեզմանոցում կա մի մահարձան, որի մոտ 22ներ շարդելը սովորույթ էր մինչև վերջին ժամանակները։

մինը» կոբցնելուց հետո միայն անդրշիրիմյան աշխարհում իրերը կարող են ծառայել իրենց նպատակին։ Նույն պատկերացման վրա էր հիմնված և դիակիզման ծիսակարգը։

Ազգագրությունը փոքր ինչ այլ ձևով է մեկնաբանում ամաններ ջարդելու ծիսակատարությունը։ Թաղման ծեսում այդ արարողությունը ընկալվում է որպես միջոց՝ ուղղված բոլոր տեսակի նյութական կապերի խզմանը ողջերի և մեռածների միջև[50]. այն բացատրվում է մինչև դիակի թաղումը հանգուցյալի հոգու վերադարձի մասին պատկերացումներով և տեղ գտնում այդ վերադարձն արգելելու ծիսական համակարգի մեջ։ Իսկ հարսանեկան ծեսում ափսե շարդելը նշան է շարի խափանման[51]։

Այժմ դառնանք ամբողջացող խեցանոթների նկարագրությանը, որոնց շնորհիվ միայն հնարավոր է թվագրել պեղված դամբարանները։ Ծուրաքանչյուր դամբանախցում գտել են 3—4 խեցանոթներ, ներառյալ բեկորներով ներկայացվածները։ № 1 դամբարանում գտնված խեցանոթներից միայն մեկն էր ամբողջացող (աղ. I, 1)։ Ինչպես արդեն նշվել է, այն գտնվել է նախամուտքի հյուսիսային պատի միջից, ըստ երևույթին գաղտնարանից։ Այն դեղնադարշնագույն փայլատ մակերևույթով, լայնաբերան մի անոթ է, հավանաբար նախատեսված հեղուկ տարողության համար (սափոր). այդ մասին կողմնակիորեն վկայում է նաև նրա միջից գտնված գետաքարը։ Մենամորի միջին բրոնզեդարյան շերտից հայտնի է նման մի խեցանոթի բեկոր, որը հարդարված է ալիքաձև գծերով[52]։ Նման խեցանոթներ հայտնաբերվել են նաև Մայիսյանի դամբարանների պեղումներով։ Նշված լայնաբերան սափորին և՛ ձևով, և՛ չափերով մոտ է Իլտոյի կենոտաֆից հայտնաբերված անոթը[53], միայն վերջինս ուսերին զարդապատկեր ունի։ Այն թվագրվում է միջին բրոնզի ավարտով (XV դարի II կես—XIV դարի I կես)։ Փիլ պակաս չափերով նման մի սափոր գտնվել է Թռեղրի 29-րդ դամբանաբլուրում[54]։ Նախամուտքից գտնվել է մոխրագույն փայլեցված մակերևույթով մի բեկոր, որի լավ թրծված ավազախառն խեցին հատուկ է ուշ բրոնզի վաղ փուլի կավանոթներին։ Դամբանախցից հայտնաբերված բեկորներն ունեն մոխրագույն փայլեցված մակերևույթ (աղ. I, 2—4)։ Խեցու բաղադրությամբ և թրծումով նրանք շատ նման են Վերին Նավերի ուշ բրոնզեդարյան վաղ փուլի խեցեղենին (դ. № 36, 37)։ Այսպիսով, որքանով թույլ է տալիս պեղված հնագիտական նյութը, № 1 դամբարանը կարելի է թվագրել միջին բրոնզից ուշ բրոնզի դարաշրջանին անցման փուլով (մ. թ. ա. XVI—XV դդ.)։

№ 2 դամբարանում առկա էին ամբողջացող երեք խեցանոթներ (աղ. II, 1, 2, 4)։ Մոխրագույն փայլեցված մակերևույթով, ոչ բարձր վզով սափորի ուսերին փայլեցման եղանակով ցանցազարդ է արված (աղ. II, 1), իսկ իրանի ամենալայն մասը՝ զույգ հորիզոնական փորագիր գծերից ցած, կտրուկ անցում ունի և այդ տեսակետից հիշեցնում է մետաղյա «կողավոր» անոթները։ Եթե անտեսենք վաղ բրոնզեդարյան եռամաս կավամանները (որպես կավանոթների այլ տիպ), ապա միջին բրոնզի դարաշրջանի «գոտիավոր» խեցանոթներ հայտնի են Ապարանից[55], Նաղկալանջից[56], Երևանից (ՀՊՊԹ, հավաք. 289, բ) և այլ վայրերից։ Ուշ

---

[50] Զ. Վ. Харатян. Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян. — В кн.: Армянская этнография и фольклор. Материалы и исследования. Ереван, 1989, с. 36.

[51] Գ. Դ. Ասատրյան. Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները. Երևան, 1960, էջ 87։

[52] Է. Վ. Խանզադյան և այլք. նշվ. աշխ., աղ. V, 1։

[53] К. Н. Пицхелаури. Указ. соч., табл. IIа, I.

[54] Л. Г. Жоржикашвили, Э. М. Гогидзе. Памятники Триалети эпохи ранней и средней бронзы (раскопки 1936—1940, 1947—1948 гг.). Каталог триалетских материалов. II. Тбилиси, 1974, с. 102. табл. 92, 108.

[55] Т. С. Хачатрян, С. А. Есаян. Археологические находки в с. Апаран (Армянская ССР). — СА, 1958, № 4, с. 197.

[56] Г. Е. Арешян, В. Э. Оганесян, Ф. М. Мурадян, П. С. Аветисян, Л. А. Петросян (далее — Г. Е. Арешян и др.). Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры. — Историко-филологический журнал, 1990, № 1, с. 67, табл. VI, 13.



Աղյուսակ II

բրոնզի դարաշրջանին են պատկանում Վերին Նավերից, Շամիրամի մեծ դամբանաբլուրներից, Քարաշամբից, Գեղարոտից, Լճաշենից և այլ պեղավայրերից հայտնաբերված «գոտիավոր» խեցանոթները։ Նման անոթներ են գտնվել Մեծամորի և Օշականի վաղ երկաթեդարյան դամբարաններից։ Ուշ բրոնզեդարյան խեցանոթներից մի քանիսի ուսերը կամ հարթ գոտիները փայլանախշ ցանցազարդեր են կրում։

Սև փայլեցված մակերևույթով, ընդաձև իրանով, ցածր վզով փոքր կճուճը (աղ. II, 2) իր ճշգրիտ զուգահեռն ունի Կարմիր Բերդի № 3 դամբարանի նյութերում[57]։ Ուսերին փայլազարդ ցանց ունեցող նման մի կճուճ հայտնաբերվել է Արթիկի № 177 դամբարանում, իսկ նույն դամբարանադաշտի № 438 դամբարանի նմանաձև կճուճն ուսերին այլ զարդապատկեր է կրում։ Մեր օրինակին շատ մոտ է Օշականի № 95 դամբարանում հայտնաբերված փոքրիկ կճուճը[58]։ Ձևով նման կճուճներ ի հայտ են գալիս դեռևս միջին բրոնզի դարաշրջանում և շարունակում են գոյատևել երկաթի դարաշրջանում։

№ 2 դամբարանից գտնվել են ուսերը հասկազարդ կամ եղևնաձև փորագիր զարդապատկերով մեկ այլ կճուճի բեկորներ (աղ. II, 4)։ Այս կավանոթի ամենավաղ նմանօրինակներից մեկը կարելի է համարել Ծաղկալանջի № 30 դամբարանից գտնված կճուճը[59]։ Նման խեցանոթներ հայտնի են Օշականի ուշ բրոնզեդարյան և երկաթեդարյան համալիրներից, Շամիրամի ամրոցի ուշ բրոնզեդարյան շերտից, Արթիկից։

Այսպիսով, խոջաբաղերի № 2 դամբարանի խեցանոթների խումբն իր զուգահեռներն ունի ուշ բրոնզեդարյան համալիրներում, հատկապես այդ դարաշրջանի ուշ փուլերով թվագրվող նյութերում, իսկ նրանց ձևի և հարդարման առանձին հատկանիշներն աղերսվում են ինչպես միջին բրոնզի, այնպես էլ վաղ և զարգացած երկաթի դարաշրջանների նմանատիպ հատկանիշներին։

№ 3 դամբարանում հայտնաբերված խեցանոթներից (աղ. III, 6—8) միայն մեկն է ամբողջանում։ Այն դեղնադարչնագույն փայլեցված մակերևույթով, կողերին հորիզոնական ակոսներով թաս է։ Ձևով և չափով նման թասեր, միայն առանց ակոսների, հայտնի են Լճաշենի № 185 և № 240 դամբարաններից։ Հետաքրքիր է, որ այս թասերը մեր օրինակին աղերսվում են նաև խեցու որակով։ Ուշ բրոնզի ուշ փուլով է թվագրվում Գոլովինոյի № 6 դամբարանը, որտեղից գտնվել է համանման մի թաս[60]։ Ձևով նման կավամաններ, շուրթի տակ արված փայլանախշով, հայտնի են Արթիկի առաջին խմբի համալիրներից[61]։

№ 5 դամբարանի խեցանոթներից (աղ. II, 7—9) միայն մեկն է ամբողջական։ Բացառված չէ, որ հատիկազարդ բեկորը (աղ. II, 9) պատկանի իրանի միջին մասում հորիզոնական ակոսներ ունեցող և ստորին մասը փայլանախշված թերի կճուճին (աղ. II, 8)։ Ինչ վերաբերում է սև փայլեցված մակերևույթով, ուղիղ կտրած շուրթով խորը քերեղանին (աղ. II, 7), որի շուրթից ցած անցնում են հորիզոնական ակոսներ, ապա կավանոթների այս տիպը բավականաչափ տարածված է ուշ բրոնզի դարաշրջանում (Լոռի բերդ, Լճաշեն, Արթիկ, Օշական)։ Էլառի ամրոցի շերտագրական 3-րդ փոսորակի վերին հորիզոնից գտնված քերեղանը[62] թեև ձևով նման է այս օրինակին, սակայն զարդապատկերով մոտ է № 6 դամբարանում գտնված կճուճներից մեկին, որի մասին խոսք կլինի ստորև։ Իրանի ստորին մասի ձևով և զարդապատկերով վերջինիս նման է նաև № 5 դամբարանի հիշյալ թերի կճուճը։

№ 6 դամբարանում պեղումներով գտնվել են ամբողջացող չորս խեցանոթներ (աղ. III, 1, 3—5)։ Մոխրագույն, փայլեցված մակերևույթով, գնդաձև իրանով փոքրիկ կճուճը (աղ. III, 1) ձևով և չափերով համապատասխան է № 2 դամբարանի համանման կճուճին։ Վերջինիս հետազոտման ժամանակ արդեն թվարկված զուգահեռներին ավելացնենք Լոռի բերդում

---

[57] А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 83, рис. 38, I.

[58] С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан I. Основные результаты раскопок 1971—1983 гг. Ереван, 1988, табл: XCVIII, 5.

[59] Г. Е. Арешян и др. Указ. соч., табл. VI, 12.

[60] А. А. Мартиросян. Указ. соч., с. 118, рис. 48, 7.

[61] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, с. 195, рис. 107, 108 справа.

[62] Է. Վ. Խանզադյան. Էլառ-Դարանի. Երևան, 1979, էջ 80, աղ. XVI, 7։

գտնված երկու կճուճները, որոնք, սակայն, զարդարանված են այլ եղանակով[63]։ Նման կճուճ հայտնաբերվել է Թրելիի № 31 դամբարանում, միայն վերջինս վզից ուսերին անցման տեղում ուռուցիկ գոտի ունի։



Աղյուսակ III

Քննարկվող հնագիտական իրերի շարքում ամենաորակյալ խեցանոթը մոխրագույն փայլեցված մակերևույթով, փայլեցման եղանակով զարդարանված նրբախեցի կճուճն է (աղ. III, 3)։ Նրա ընտիր փայլը հիացնում է դիտողին. խեցին բարակ չէ, սակայն նուրբ է ու ջղրնգուն։ Իր զարդանախշերով այն մոտ է էլառի վերոհիշյալ քերևղանին։ Հորիզոնական ալիքների խմբով և ուղղահայաց փայլեցված գծերով զարդարուն խեցանոթները լայն տարածում ունեն Հայաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձաններում։ Զարդանախշման այդ մոտիվը համընդհանուր է նաև Վրաստանի համաժամանակյա նյութերում[64]։ Մասավորապես մեր օրինակի ձևն ունի Օշականի № 95 դամբարանում գտնված սեղմված գնդաձև կճուճը[65], Քարաշամբում[66],

---

[63] С. Г. Деведжян. Лори-Берд, I. Ереван, 1981, табл. XIV, средний и нижний слева.

[64] „თბილისი". არქეოლოგიური ძეგლები. I, თბ., 1978 83 109, ტაბ. 66.

[65] С. А. Есаян, А. А. Калантарян. Указ. соч., табл. XCVIII, 4.

[66] Г. Е. Арешян и др. Указ. соч., 61—62, табл. III, 8.

Դիլիջանում[67], Արթիկի դամբարանադաշտում[68] գտնված բաղմաթիվ կավանոթներ և՛ ձևով, և՛ զարդապատկերով մոտ են մեր օրինակին։ Չափերով և զարդանկարով բավականաչափ նման մի կճուճ գտնված է Սամթավրոյում և թվագրվում է մ. թ. ա. XIV դարի կես—XIII դարի կեսով[69]։

Ամբողջովին համակենտրոն փորագիր գծերով պատված սև կճուճն ուսերին և հատակին եղունգաձաղ է կրում (աղ. III, 4)։ Կարծիք է հայտնված, որ ուշ բրոնզի ուշ փուլում խեցանոթների վրայից աստիճանաբար վերանում են զարդապատկերները և դրանք պատվում են համակենտրոն գծերի օղակներով[70]։ Նման հարդարումով կճուճներ հայտնի են Օշականի, Կարմիր Բերդի, Էլառի, Լճաշենի, Արթիկի, Սամթավրոյի դամբարանադաշտերի ուշ բրոնզեդարյան ուշ փուլի դամբարաններից, սակայն նշված զարդամոտիվը շարունակում է գոյատևել երկաթեդարյան խեցանոթների վրա։ Հետաքրքիր է, որ նմանօրինակ անոթները, որոնք Վրաստանում տարածված են երկաթի դարաշրջանի վաղ փուլում[71], հանդիպում են նաև միջին բրոնզի վերջում (Լիլո[72], Բրևիի № 53 և 74 դամբարաններ[73]) և ուշ բրոնզի դարաշրջանում։

№ 6 դամբարանում հայտնաբերված սև փայլեցված քերեղանի (աղ. III, 5) շուրթից ցած փայլեցման եղանակով ցանցաղարդ է պատկերված, ինչպիսին արված է № 2 դամբարանի սափորի ուսերին, իսկ ձևով այն որոշ չափով նման է № 3 դամբարանից գտնված թասին, միայն թե շատ ավելի մեծ չափերի է։ Այս քերեղանի զուգահեռները կարելի է տեսնել Արուճի դամբարանադաշտի № 5 դամբարանում, Էլառում, Գեղարոտում, Լճաշենում, Արթիկում, Քեթիում։ Լինելով խեցանոթների տարածված տեսակներից մեկը, այդ քերեղանները գործածվել են ուշ բրոնզի դարաշրջանի և՛ վաղ, և՛ ուշ փուլերում։

Չնայած այն բանին, որ ձևի և զարգացանելու առանձին հատկանիշներով որոշ անոթների նախատիպերը կարելի է փնտրել միջին բրոնզի դարաշրջանում (օրինակ, գնդաձև իրանով փոքրիկ կճուճները, համապատասխան գունազարդումով, ընորոշ են կարմիրբերդյան մշակույթին), իսկ որոշ խեցանոթների հարդարման (ինչպես, օրինակ, կճուճի իրանը համակենտրոն փորագիր գծերով պատելն է) ուշ արձագանքները հասնում են երկաթի դարաշրջան, այնուամենայնիվ խոշաբաղերի դամբարանախմբի № 2—6 դամբարանների պեղումներով հայտնաբերված խեցանոթների ոչ այնքան հարուստ հավաքածուն հնարավորություն է տալիս նշված դամբարանները թվագրել ուշ բրոնզի դարաշրջանով։ Ավելին. վերլուծությունը ցույց է տալիս, որ խեցանոթների քննարկվող հավաքածուն, ամբողջության մեջ, աղերսվում է ուշ բրոնզեդարյան երկրորդ խմբի համալիրներին (Օշականի № 85, 88, 89, 95 դամբարաններ, Արթիկի դամբարանների երկրորդ խումբ և այլն)։ Թեև կավանոթներից մեկ-երկուսը ակնհայտ վաղ շրջանի տեսք ունեն (№ 2 դամբարանի սափորը, № 6 դամբարանի քերեղանը), սակայն նրանց հետ եղած մյուս իրերը (№ 2 դամբարանի հասկազարդ կճուճը, № 6 դամբարանի եղունգաղարդ և փորագիր գծերով պատված կճուճը) հուշում են, որ, ըստ երևույթին, մենք գործ ունենք ուշ բրոնզի դարաշրջանի ուշ փուլին պատկանող համալիրների հետ։ Քանի որ, ինչպես վերը տեսանք, խոշաբաղերի տարբեր գամբարաններից գտնված խեցանոթները նման ձևեր և ընդհանուր հատկանիշներ ունեն, դամբարանները իրար հետ կապված են նաև կառուցվածքային ընդհանրություններով և թաղման ծիսակարգով, ինչպես նաև հաշվի առնելով դամբարանների իրար բավականաչափ մոտ գտնվելու հանգամանքը, կարելի է եզրակացնել, որ նրանք գրեթե համաժամանակյա են։

Այսպիսով, խոշաբաղերի № 2—6 դամբարանները, որոշ մոտավորությամբ, կարելի է թվագրել ուշ բրոնզի դարաշրջանի երկրորդ փուլով, այսինքն մ. թ. ա. XIII—XII դարերով։ Հիշեցնենք, որ № 1 դամբարանը թվագրվում էր մ. թ. ա. XVI—XV դարերով։

---

67 Հ. Ա. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 33, տախտ. XLII, վերին։

68 Т. С. Хачатрян. Указ. соч., с. 191, рис. 93 верхний ряд, с. 221, рис. 134, верхний слева. Он же. Артикский некрополь, с. 301, верхний.

69 კ. ფიცხელაური. ალმოსავლეთ საქართველოს ტომთა ისტორიის ძირითადი პრობლემები (ძვ. წ. XV–VII სს.), თბ., 1973, ტაბ. LIX, 1.

70 Հ. Ա. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 34։

71 კ. ფიცხელაური. նշվ. աշխ., ტაბ. LXVII, 2.

72 К. Н. Пицхелаури. Указ. соч., табл. IIб, 2.

73 „თბილისი", I, էջ 56, նկ. 23, 426· էջ 62, նկ. 28։

Ամփոփենք։ Աշտարակի Խոջաբաղերի դամբարանները ժայռոտ հրվանդանի վրա տեղադրված, քարե շրջաններով շրջապատված, քարե լիցքով դամբանաթմբեր են, որոնց մոտավոր կենտրոններում գտնվում են դամբանախցերը (վերգետնյա քարարկղներ)։ Ննջեցյալները, հավանաբար, թաղման խցերում ամփոփվել են երկրորդվող դիաթաղման (վերահուղարկավորման) եղանակով (անհատական և դույդ թաղումներ)։ Դամբանաթմբերի տարածքները և բուն դամբանախցերը կրակով (դուցե նաև ջրով) ենթարկվել են ծիսական մաքրման։ Կատարվել է հոգեհացի արարողություն, զոհաբերվել են կենդանիներ և խեցանոթներ։ Մի շարք ծիսակատարություններ վերաբերել են ննջեցյալներին չար ուժերի ազդեցությունից ներծ պահելու պահպանական համակարգին, վանակատի ցլեպների առկայությունը կարող է կապված լինել զոհաբերված կենդանիների ծիսական սպանդի հետ։ Ուղեկցող նյութը բաղկացած է խեցանոթներից և համեստ զարդարանքի առարկաներից, որոնք ավելի շուտ պահպանակի դեր կարող էին կատարել։ Նման դամբարաններն ընդունված է անվանել շարքային։ Սակայն այս շարքային թաղումներն անգամ հնարավորություն են տալիս, հավանական մոտավորությամբ, վերականգնել ժամանակի աշխարհայացքի որոշ կողմերը։ Պեղումներով հայտնաբերված նյութերն իրենց զուգահեռներն են գտնում ինչպես պատմական Արագածոտնի, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի այլ գավառների ուշ բրոնզեդարյան հնագիտական համալիրներում։ Ժամանակակից Աշտարակի ոչ մեծ տարածքում երեք դամբարանադաշտերի (Վերին Նավեր, Սասունիկ, Խոջաբաղեր) գոյությունը խոսում է շրջակայքում ուշ բրոնզի դարաշրջանի բնակչության մեծ խտության և տեղաբնիկների բնակության շարունակական լինելու մասին։

ПОЗДНЕБРОНЗОВЫЕ ПОГРЕБЕНИЯ МЕСТНОСТИ ХОДЖАБАГЕР В АШТАРАКЕ

Г. С. ТУМАНЯН

Резюме

Аштаракской экспедицией Института археологии и этнографии НАН Республики Армения в 1988—89 гг. в местности Ходжабагер па северной окраине города Аштарака раскопаны 6 курганов высотой каменной насыпи 0,70—1,50 м, окруженные кромлехами диаметром 6—7 метров. Погребальные камеры—наземные каменные сооружения, установленные приблизительно в центральных частях курганов—в плане трапециевидные, размерами 2,38—1,80×1,25—1,00×1,15—0,60 м. В основном они направлены на юг с отклонениями, дромосы сооружены с севера. Усопшие, по-видимому, были погребены обрядом вторичного захоронения (перезахоронения). Место погребений и, в особенности, погребальные камеры подвергались ритуальному очищению с помощью огня (и может быть—воды). Раскопками зафиксированы остатки тризны, кости жертвенных животных, черепки ритуально разбитых сосудов. Обсидиановые отщепы, вероятно, связаны с ритуальными закланиями жертвенных животных, а осколки и обломки обсидиана имели предназначение сберечь покойников от воздействий злых сил. Обнаруженный при раскопках курганов остальной археологический материал состоит из керамических сосудов и предметов украшений. На основании найденных предметов погребение № 1 датируется XVI—XV вв. до н. э., а остальные погребения —XIII—XII вв. до н. э. Выявленный археологический комплекс перекликается как с соответствующими комплексами исторического Арагацотна, так и с позднебронзовыми археологическими материалами других областей Армении.